Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ Ծրագրի միջոցով AM09/ENP-PCA/TP/04

Տեղեկագիր 1, Հունվարի 31 – Մայիսի 20, 2011

Սույն տեղեկագիրը ԵՄ Թվինինգ ծրագրի առաջին տեղեկագիրն է՝ <<Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը Թվինինգ Ծրագրի միջոցով>>: ԵՄ –ի կողմից ֆինանսաավորվող ծրագիրը իրականացվում է Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից՝ համագործակցելով Դանիայի Վիճակագրության հետ (առաջատար գործընկեր), Դեստատիս (կրտսեր գործընկեր), ինչպես նաև ծրագիրը ներգրավում է փորձագետներ Ֆինլանդիայից, Գերմանիայից, Լատվիայից, Լիտվայից և Շվեդիայից:

Ներկայումս ծրագիրը գտնվում է իրականացման 4 դդ ամսվա ավարտի փուլում և սույն տեղեկագիրը ներկայացնում է սկզբնական ժամանակահատվածում կատարված բոլոր աշխատանքները: Ակնկալվում է նման տեղեկատվական պարբերական արդիականացումների տրամադրումը յուրաքանչյուր 3-4 ամիսը մեկ անգամ:

Ծրագրի նախապատմությունը

Բոլոր նրանց համար, ովքեր չունեն բավարար տեղեկություններ ունեն Թվինինգ ծրագրի վերաբերյալ՝ սա երկու տարվա ծրագիր է, որի ընդհանուր բյուջեն կազմում է 1 միլլիոն եվրո: Ծրագիրը բաղկացած է վեց այսպես կոչված բաղադրիչներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր պարտադիր արդյունքները (հակիրճ):

Բաղադրիչ Ա. Որակի կառավարում՝ մեթատվյալներ և որակական ցուցանիշներ
Բաղադրիչ Բ. Բիզնես վիճակագրություն՝ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության նվազեցում
Բաղադրիչ Գ. ՀՆԱ –ի ամբողջականություն՝ ազգային հաշիվների ընդգրկման բարելավում
Բաղադրիչ Դ. Գյուղատնտեսության համատարած հաշվառում՝ հաշվառման պլանավորում և ներկայացում
Բաղադրիչ Ե. ՀՍԳԻ՝ Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսը մշակում
Բաղադրիչ Զ. ՏՀՏ հանրություն՝ ձեռնարկությունների հետազոտություն, ՏՀՏ օգտագործման հետազոտության իրականացում

Բացման արարողություն (մեկնարկ)

Ծրագրի պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 2011 թվականի մարտի 16 ին Երևանի Կոնգրես հյուրանոցում: Ելույթի խոսքով հանդես եկան՝ ՀՀ Ազգային Վիճակագրության Ծառայության նախագահ պրն. Ստեփան Մնացականյանը, ՀՀ-ում Եվրամիության Պատվիրակության ղեկավար պրն. Ռաուլ դը Լյուցենբերգերը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանը ՀՀ –ում պրն. Հանս Յոխեն Շմիդթը:

Հիմնական խոսնակը Դանիայի Վիճակագրության նախագահն էր: Նա ներկայացրեց վիճակագրության կարևորությունը և վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, մոտավորապես 100 մարդ ներկա գտնվեցին բացման հանդիսավոր արարողությանը՝ ներառյալ լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Միջոցառումից երկու օր անց, ծրագրի երկու ղեկավարները՝ պրն. Ստեփան Մնացականյանը և Լարս Թյուգեսենը, հարցազրույց տվեցին Հայաստանի

հանրային հեռուստաընկերության ծրագրին, որի թեման վերաբերվում էր Հայաստանի և ԵՄ-ի միջև ընդհանուր համագործակցությանը:

Հանդիպում ՀՀ փոխվարչապետի գրասենյակում
Բացման արարողության նախորդ օրը, պրն. Մնացականյանը և պրն. Պլովզինգը հանդիպում ունեցան ՀՀ փոխվարչապետ պրն. Արմեն Գրիգորյանի հետ: Հանդիպման նպատակն էր օգտվելով Դանիայի փորձից՝ քննարկել վիճակագրական նպատակներով վարչական ռեգիստրների օգտագործման հեռանկարները, ներառյալ՝ հնարավոր ենթադրելի երկարաժամկետ ծախսերի կրճատումը կապված ավանդական հետազոտությունների և մարդահամարի հետ: Հանդիպումը լուսաբանվեց նաև նախարարության կայք էջում, և այսուհետև որոշ կարևոր հիմնախնդիրներ կապված ՀՀ ԱՎԾ-ի ռազմավարական նպատակներին հասնելու հնարավորությունների հետ կարող են լուծում ստանալ:

Յուրաքանչյուր բաղադրիչի հաջողված սկզբնական գործունեությունները
Այս տեղեկագրի թողարկման ժամանակ, գործունեությունների (առաքելությունների) երկրորդ շրջանն է իրականացվում՝ այսինքն յուրաքանչյուր բաղադրիչի առաջին գործունեությունները արդեն մինչ այս ժամանակահատվածը իրականացվել են:

Բաղադրիչներ Ե և Զ –ի համար իրականացվել է սկզբնական փաստահավաք առաքելություն և այնուհետև մանրամասն պլանավորում է իրականացվել ծրագրի հետագա ժամանակահատվածի համար, այսինքն առաջիկա 20 ամիսների ընթացքում կրկնակի գործունեություններ են տեղի ունեցել այս երկու բաղադրիչների շրջանակներում: Ներկայումս, մնացած չորս բաղադրիչները արդեն սկսել են կազմել ժամանակացույց, որոնք վերջնական ավարտին կհասցվեն երկրորդ գործունեության ընթացքում:

Առաջին գործունեությունները մասնավորապես կենտրոնացված են եղել բաղադրիչի ղեկավարների կողմից շնորհանդեսների ներկայացման և ՀՀ ԱՎԾ –ի ներկայիս կարգավիճակի վրա, մեկ այլ ընդհանուր հատկանիշներից մեկն էլ եղել է անդամ պետությունների կողմից Եվրոպական Միության համապատասխան կանոնակարգերի ներկայացումը: Որպես կանոն, յուրաքանչյուր բաղադրիչի շրջանակներում բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերը հրավիրված են եղել մասնակցելու կարևոր քննարկումներին:

Մինչ այժմ կարևոր հարցերից մեկն այն է, որ բավականին լավ աշխատանքային հարաբերություններ են ձևավորվել Հայաստանի և Անդամ Պետությունների ծրագրի մասնակիցների միջև բոլոր բաղադրիչների շրջանակներում՝ այս համագործակցությունը բնութագրվում է որպես փոխադարձ հավատարմության և վստահության վրա հիմնված համագործակցություն: Պետք է նշել նաև, որ այժմ իսկապես սկսվում է աշխատանքի առավել ծանրաբեռնված մասը՝ գործունեությունների առաջիկա շրջանի արդյունքները կախված են տարբեր առաքելությունների միջև կատարված աշխատանքներից:

Ինչպես կարելի է ստանալ առավել շատ տեղեկություններ

Հնարավոր տարբերակներից մեկն է հանդիսանում հաջորդ տեղեկագրի թողարկումը:
Մեկ այլ տարբերակ է ծրագրի կայք էջից www.dst.dk/armenia օգտվելը:

Կարող եք նաև անմիջական կապ հաստատել մեզ հետ՝ ծրագրի ընթացիկ կառավարման աշխատանքները իրականացվում են հետևյալ չորս աշխատակիցների շնորհիվ, որոնց դուք կարող եք տեսնել նկարում (Երևան, ՀՀ ԱՎԾ): Թոմաս Բի, ԹՄԽ tbi@dst.dk, Անահիտ Սաֆյան, ԹՄԽ գործընկեր info@armstat.am, Դիանա Գասոյան, ԹՄԽ օգնական dgasoyan@yahoo.com, Լիանա Աթոյան, ԹՄԽ թարգմանչուհի alia7a@yahoo.com.Բացի այդ, Ջեսպեր Էլեմոս Ջենսենը (jej@dst.dk) և Կենեթ Հոգսթեդ Թոմսենը (kht@dst.dk) զգալի օժանդակություն են ցուցաբերում ծրագրին Դանիայի Վիճակագրության կենտրոնական գրասենյակից: